

Լըճակին շուրջ, թաղարներու մէջ թիթեղ,
 Ուր կայլակ մը կ'իյնայ կարմիր, ամէն հեղ
 Որ հովն անխիղճ ենթարկէ ծառն իր ցունցին:
 Հիւղն աներագ կու լայ ժըպիտ մը դաժան.
 Պատուհաններն՝ անվարագոյր, անթաղար,
 Տժգոյն բաղձանքն ունին լոյս ու կապոյտի:
 Ու ցաւագին եւ անթարթիչ զերթ կոպեր,
 Ուր անծաղիկ աշնան մը թուխպը խաղար՝
 Հոն անանուն թախծութիւն մը կը փթթի:
 Բայց, երիզուած ժապաւէնով ճառագայթ՝
 Ամպերու գորշ վիժակներուն ետեւէն՝
 Կ'երեւայ բիլշարեշապիկ մը անգայտ՝
 Որ երագել կու տայ հիւղին, ոսկեղէն
 Պերճութիւնը նոր գարունի մը կոյսին...

22 - 24. ԸԼԼԱՅԻ՛, ԸԼԼԱՅԻ՛

22. ԻՐԻԿՈՒՆԸ

Սա իրիկունն ըլլայի ես
 Եւ հըպէի ճակտին ամէն անցորդի.
 Չքնաղագեղ ու նըւաղուն համուրդի
 Սա իրիկո՛ւնն ըլլայի ես:

Սա իրիկունն ըլլայի ես,
 Լի երգովը թռչուններուն, մարդերուն,
 Ու տարրերուն աղաղակովը տրոփուն՝
 Սա իրիկո՛ւնն ըլլայի ես:

Սա իրիկո՛ւնն ես ըլլայի,
 Թոյլ, նագէնի, շըղարշային, վարդաբոյր,
 Ու ծըփայի զերթ ոսկեսար վարագոյր
 Կըրան ամէն հոգիի:

Սա իրիկունն ըլլայի ես,
 Լի զանգակին դողանջներովն երկնաճեմ.